ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊԱՐՈՆ Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայն 2026 թվականի հունիսի 30-ին ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի 4-րդ գլխի 1-ին մասի՝ 2026 թվականի հուլիսի 6-ից մինչև օգոստոսի 6-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ՝

1. Գույքագրման աշխատանքներն իրականացնելու համար դյուրակիր համակարգչի վրա տեղադրվել են Total Network Inventory ծրագիրն ու դրա լիցենզիան: Լիցենզիայի ակտիվացումից հետո համակարգչի կոշտ սկավառակը (HDD) փոխարինվել է նոր SSD կրիչով, ինչի հետևանքով ծրագիրը վերատեղադրվել է: Սակայն լիցենզիայի կրկնակի ակտիվացման ժամանակ առաջացել է տեխնիկական խնդիր, և գույքագրման ծրագիրը դադարել է աշխատել: Հարցի կարգավորման նպատակով պարբերաբար կապ է հաստատվել Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության տեխնիկական աջակցության մասնագետների հետ, սակայն խնդիրը դեռևս չի լուծվել: Արդյունքում ինքնաշխատ սկանավորման եղանակով գույքագրումն իրականացվել է մասնակի:

2. Հաշվի առնելով վերոգրյալ տեխնիկական խնդիրը՝ տեղեկատվական համակարգերի (կայքերի, հարթակների), թվային և ոչ թվային տվյալների կատեգորիայում պայմանագրերի, համաձայնագրերի, տվյալների բազաների, ինչպես նաև օգտատերերի գրանցամատյանների գույքագրումը ռեեստրում այս փուլում դեռ չի իրականացվել:

3. Մասնակի գույքագրման ընթացքում հայտնաբերվել է շուրջ 200 ծրագրային ապահովում, որոնք տեղադրված են համակարգիչներում, սակայն չունեն գործող լիցենզիա կամ լիցենզիայի վերաբերյալ տվյալները հասանելի չեն: Դրանց թվում են ինչպես ամենօրյա կիրառման գործիքներ (օր.՝ տեքստային խմբագիրներ, PDF ծրագրեր), այնպես էլ մի քանի մասնագիտական ծրագիր:

4. Ակտիվների հաշվառումն ամբողջական իրականացնել հնարավոր չէ. ցանցի քարտեզագրումն իրականացվել է ավելի վաղ, և ստացված սխեման ամբողջությամբ չի արտացոլում ներկայիս իրավիճակը: Մի շարք ֆիզիկական սարքեր (switch-եր, access point-եր, երբեմն նաև աշխատակայաններ) ռեեստրում կամ ընդհանրապես արտացոլված չեն, կամ գրանցված են սխալ IP հասցեներով և անվանումներով: Բացի այդ, համակարգիչների հին ծրագրային ապահովումների պատճառով ամբողջական գույքագրում հնարավոր չէ իրականացնել:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ՝

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

06.08.2026թ.